

ՏԱՍՆ ԵՒ ՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ



Տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Առանձին համարները 7 կոպեկով:

Թիֆլիսում գրվում են միմյանի խմբագրատան մէջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редація «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Բացի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւնը ընդունվում է ամեն լեզուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաւարանիւր բառին 2 կոպեկ:

„ՄՇԱԿ“

ԴՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔՆՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԿԻՒ

ՆԵՐԿԱՅ 1887 ԹԻՒՆ

Հրատարակվում է Թիֆլիսում, նոյն գիւղով և նոյն պրոգրամայով: Մենք ստանում ենք սկիական
ՀԵՌԱԳՐԱՆԵՐ:

ՄՇԱԿԻ տարեկան գինը 10 ռուբլի է, կես տարվանը 6 ռուբլի:
Գրվել է ՄՇԱԿԻՆ կարելի է խմբագրութիւնը (Բարձրագույն և Բարձրագույն փողոցների ան-
կիւնում, Թաւառակի տանը):
Կայանքութեան ուրիշ քաղաքներից ՄՇԱԿԻՆ գրվելու համար պէտք է գրիմը հետեւեալ հաս-
ցեով. ТИФЛИСЪ, Редація газеты «Мшакъ», իսկ արտասահմանից. Tiflis, Rédaction du jour-
nal arménien «MSCHAK».

Խմբագիր-հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱՅԻՆՈՒԹԻՒՆ

Երկաթուղու խնդիրը.—ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Բազուկ հայ կանաչը. Նամակ կախից. Ներքին
լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին լու-
րեր.—ՀԵՌԱԳՐԱՆԵՐ.—ԲՈՐՍԱ.—ՅԱՏԱՐԱՐԱՌԻ-
ԹԻՒՆՆԵՐ.—ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Մանկատան աշխարհ-
հանապետը.

ՆԵՐԿԱՅԻՆ ԽՆԴԻՐ

Ինչպէս յայտնի է, մենք Անդրկովկասում
երկաթուղու միայն մի գիծ ունենք, այսին-
քն այն գիծը, որ սկսվելով Բազուկից, անց-
նում է Թիֆլիսով և հասնում է մինչև
Բաթում, ունենալով մի փոքրիկ ճիւղաւոր-
ութիւն մինչև Փոթի քաղաքը: Ահա դա
է այն միակ երկաթուղային գիծը, որ տա-
րիներ ընթացքում շինվեցաւ: Անդրկովկա-
սում, և այնուհետեւ այլ ևս չէ շինվում
մեզ մօտ երկաթուղու ոչ մի նոր գիծ, չը
նայելով որ մեր երկրի հարաւային նա-
հանգիստը, այն նահանգները, որոնք Պարս-
կաստանի և Թուրքիայի սահմանների վրա
են գտնվում, մեծ կարիք ունեն երկաթու-
ղու:

Կարելի նահանգը արդիւնաբերում է հաց,
կրկանի նահանգը արդիւնաբերում է թէ
հաց, իսկ մեծ քանակութեամբ և թէ այլ
և այլ հարաւային բերքեր, բայց այդ հա-
րուստ երկրներն արդիւնաբերութիւնները
մեծ մասամբ մնում են տեղի վրա և չեն
արտահանվում: Ճանապարհներ չը լինելու

պատճառով: Երևանի նահանգի բերրի հո-
ղերը որ և է օրինաւոր հաղորդակցութեան
բացակայութեան պատճառով շատ չնչին
գին ունեն և երբեք չեն կարող տալ այն
կառնուոր իրանց կառնածաւերներին, որ կը
տային, եթէ երկաթուղու գիծը կապեր Ան-
դրկովկասեան հարաւային նահանգները
Թիֆլիսի հետ, ուրեմն Անդրկովկասեան եր-
կաթուղու միջոցով և երկու ծովերի հետ,
կապից և Սև ծովի հետ: Երևանեան նա-
հանգը հարուստ և բազմատեսակ բերքը
մեծ մասամբ փոխում է տեղի վրա, առանց
միջոց ունենալու արտահանված լինելու և
արդիւնաբերողներն էլ համոզված լինելով
որ չեն կարող սաղացել իրանց արդիւնա-
բերածը, ի հարկէ, ջանք էլ չեն դնում ա-
ւելի մեծ քանակութեամբ արդիւնաբերելու
այն բերքերը, որոնց ոչ մի տեղ քիչ թէ
շատ ձեռնառու դնելով ծախել չեն կարող:
Այլ ևս չենք խօսում այնպիսի խոշոր և
աչքի ընկնող արդիւնքների վրա, ինչպէս
հացը, բրինձը, բամբակը և այլն, բայց նոյն
իսկ երևանեան նահանգի աննման մրգերը
և բանջարեղէնները մեծ քանակութեամբ
կը բերվին մեզ մօտ և կարտահանվին
հօնաւորների ձեռքով Ռուսաստան և արտա-
սահման, եթէ երևանից մինչև Թիֆլիս
երկաթուղու ունենայինք:

Մենք առհասարակ ոչինչ բանից օգտվել
չը կրնանք: Ուրիշ երկրներ եթէ այդ տե-
սակ ահազին ծովակ լինէր, ինչպէս Գեղա-
մայ ծովակը, որ 300 վերստ շրջապատ
ունի և ներկայացնում է մի շատ յարմար

հաղորդակցութեան միջոց, այդ ջրի ահա-
զին մակերեսից անպատճառ օգուտ կը
բաղէին, չորեհասկային հաղորդակցութիւն
իրադրեցնելով այդ ծովակի վրա: Գեղամայ
կամ Գեօկլայի անուանված ծովը, եթէ մեծ
չորեհասկ ունենար, նշանաւոր կերպով կը
նպաստէր Անդրկովկասեան այլ և այլ դա-
ւաների միմեանց մէջ հաղորդակցութեան
հեշտացնելուն: Այդ ծովակը մի երկար ձև
ունի և տարածվում է հարաւից դէպի
հիւսիս, ունենալով 10 աշխարհադրական
մղոն իր հարաւային ծայրից մինչև հիւ-
սիսային ծայրը, ուրեմն դա կարող էր ծա-
ւայել որպէս մի շատ յարմար ջրային ճա-
նապարհ երկրի հարաւից դէպի հիւսիս
բեռնիքը չորեհասկով տեղափոխելու հա-
մար:

Այդպիսով ոչ երկաթուղին է շինվում
մեզանում, ոչ էլ օգուտ ենք քաղում եղած
ջրային ահազին տարածութիւնից, որ ներ-
կայացնում է մեզ Գեօկլայի լիճը.— և մեր
երկրի հարաւային նահանգները, իրանց
հարստութեամբ, կտրված են մնում մեզա-
նից և ամբողջ քաղաքակիրթ աշխարհից,
չեն կարող հարստանալ միջոց չունեն ար-
տահանել իրանց հարուստ արդիւնաբերու-
թիւնները, որոնք ի զուր փոխում են տեղի
վրա, առանց որ և է օգուտ տարու ոչ ի-
րանց արդիւնաբերողներին, ոչ էլ մատչելի
են դառնում մեզ, սպառողներին: Այդպի-
սով Անդրկովկասեան հարաւային նահանգ-
ները, որոնք կարող են աշխարհից ամենա-
հարուստ երկրներից համարվել, չեն մաս-
նակցում թէ մեր երկրի և թէ ամբողջ
աշխարհի կուլտուրական, արդիւնաբերա-
կան մրցման մէջ:

Այժմ խօսք կայ որ մի բերլիական ըն-
կերութիւն, որ յանձն է առնում Պարսկաս-
տանում երկաթուղիներ կառուցանելու,
խնդրեք է ներկայացրել մեր կառավարու-
թեանը, թոյլ տալ իրան՝ շարունակել եր-
կաթուղու գիծը Պարսկաստանից մինչև
Երևան և այդ վերջին քաղաքից էլ մինչև
Անդրկովկասեան երկաթուղային գիծը: Աս-
տուած տայ որ այդ մտադրութիւնն իրա-
կանանայ. այն ժամանակ երևանը մի կող-
մից կապված կը լինի երկաթուղով Թուրքի-
հետ, իսկ միւս կողմից Թիֆլիսի հետ և
արդէն եղած Անդրկովկասեան երկաթուղու
գծի միջոցով կապուի և Սև ծովերի հետ:

Գ. Ա.

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՄԱՆԶԵՍՏԻ ԱՇԽԱՐՀԱՆԳԻՆ

Անցեալ տարի յունիսի 11-ին մի ժողով կայա-
ցաւ Մանչեսթրի «Թատն Հօլում», որի նպատա-
կըն էր խորհել թէ ինչ կերպով պէտք է հուշակել
թագուհու յիսնամեայ յօբելանը: Ժողովը վերջա-
նալոց յայտարարվեցաւ թէ որոշված է Ման-
չեսթրում բանալ մի աղջկային աշխարհահանդէս,
որը պէտք է պարունակէ այն ամեն գիւտերն և
կատարելագործութիւնները, որոնք մտած են դի-
տութիւններ, արհեստներ և ձեռակերտութեան
մէջ թագուհու այս յիսնամեայ կառավարութեան
միջոցում: Այս լուրը կայծակի արագութեամբ թը-
ռաւ դէպի Անգլիայի ամեն անկիւնները և այ-
նուհետև լրագրութեան մէջ սկսվեցաւ տեղալ կար-
ծիքների մի յորդ հեղեղ: Երկրի մի դասը համա-
կրում էր մանչեսթրիներին գովելի նպատակը,
մինչև միւս մասը ծաղրում էր, առաջ բերելով
թէ դա երկրի բարեկեցութեան վնասակար մի
ձեռնարկութիւն է, երբ օտարացիք պէտք է վա-
զեն աշխարհի ամեն ծայրերից և մի օրվայ մէջ
ձանթանան այն ամեն գիւտերի և հարստու-

թիւնների աղբիւրների հետ, որոնք մինչև անգամ
տեղացիներից դաղանի պահված են: Սակայն
Մանչեսթրում յղացած քաղաքաբար ծնում է յուս-
նալուսն պէս. արդէն մի և նոյն օրից մի ներկա-
յացուցիչ մասնագործով սկսեց զբաղվել այդ ձեռ-
նարկութեան նիւթական մասով և մի ամսից
յետոյ քաղաքագլուխը ծանուցութեամբ յայտա-
րարեց թէ աշխարհահանդէսը պէտք է բացվի

1887 տարվայ մայիսի 2-ին և թէ մօտ մէկ ու
կէս միլիոն ռուբլու չափ գումար պատրաստ է
զբաւականի համար: Մանչեսթր, որ քուէարկած
էր միլիոններ իր նաւային ջրանցքի համար, որ
որոշած էր հաղորդել Բրիտանական ընկերու-
թեան անգամ գիտնականներին հիւրասիրելու
համար, որոնք այժմ ժողովված են Մանչեսթրում
և որոնց թուում են դերամանցի, Ֆրանսիացի,
ուսու և ամերիկացի ամենանշանաւոր գիտնական-
այս, այն ծխող Մանչեսթր, որին Նապոլեօն ա-
նուանում էր «խառնութեամբների քաղաք» և որին
գերմանացիք երբեմն ծաղրաբար կոչում են
«բամբակաքաղաք», լուսարկից այս անգլիս գու-
մարը առանց տրանջիւնու:

Այնքան է թէ այսպիսի մի ընդարձակ նպա-
տակ ունեցող աշխարհահանդէսի մէջ որոշ սիւ-
տեմ մտնելն անկարելի է, այսու ամենայնիւ
բաւական համարվեցաւ եթէ տարբեր լատին-
մուսլիմների տակ կարգաւորել նիւթերը և լուրա-
քանչիւր լատինմուսլիմ յանձնել մասնակցաւ ան-

ՆԵՐԿԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

Այս վերնագրով մի յօդուածով, մի երկու ա-
միս սրանից առաջ, մի անհարկ ձգելով Բազուկի
հայ կանանց վրա, վերջումը յոյս էինք յայտնել,
որ վերջապէս նրանք կը զարթնեն անտարբերու-
թեան քնից և կը ձեռնարկեն մի որ և է հասա-
րակօգուտ բան: Մեր ձայնը կանանց մէջ ոչինչ
արձագանք չը գտաւ, բայց սրանով մենք մեզ
յուսահատված չենք համարել: Առժամանակ այդ
հարցի մասին մամուլի միջոցով խօսելը մենք յի-
տաձգեցինք, աչքի առաջ ունենալով, որ ամառը
նրանք՝ որոնք ձեռնն աւելի միջոցներ ու յարմա-
րութիւններ կան և որոնք աւելի առիթ ունենին
մի այդպիսի ձեռնարկութեան, ցրված էին մեծ
մասամբ ամառանոցներում: Այժմ նրանք վերա-
դարձած լինելով Բազուկ, մենք էլ հարկաւոր ենք
դանում դառնալ այդ կարեւոր հարցին և արծար-
ծել մամուլի միջոցով:

Ով որ էլ ուզէ, թի՛ղ այդ, առժամանակ, ան-
յարմար համարի, ով որ էլ ուզէ, թի՛ղ Բազուկի
հայ կնոջ անընդունակ համարի և անպատրաստ,
բայց մենք պնդում ենք, որ ոչ մի տեղի հայ կինը
ոչնչով աւելի բարձր չէ, ոչինչով առաւելութիւն-
ներ չունէ, քան Բազուկի հայ կինը, այստեղ ինչ-
պէս էլ Թիֆլիսում և այլուր, հարկաւոր է օրի-
նաւ և կ, հարկաւոր է նախ և եւրոպայի և
ուսուցող մէկը, և ամեն բանգործի կը գայ:
Մենք հայ կանանցից չենք պահանջում մեծ մեծ
գործեր, ոչ. մեծ մեծ գործեր դեռ հայ մարդն էլ
անպատրաստ է դործելու: Մենք պահանջում ենք
միայն սկիզբ դնել կենդանի բարեգործութեան,
իսկ դալոց սերունդը, յոյս ունենք, այդ սկիզբնե-
րը առաւել կը լայնացնի, առաւել կը մարմնացնի:
Մէջտեղ բերենք մի փոքրիկ և համեստ, բայց օ-
րինակելի մի բարեգործական ձեռնարկութիւն.
Թի՛ղ հայ կինը չը զլանայ այդ կարգաւոր, և մի
առժամանակ մտածութեան կնիքակի, և ապա
ես հաւատարմած կամ, որ նա անպատճառ այդ օ-
րինակից օգտվի և կը հետեւի նրան: Կարողում
ենք մի օտարազգի հուշակութեամբ լրագրում հետեւեալ
պատկերը:

«Այդ ինչ համեստ տուն է, մեծ ճանապարհի
վրա, քաղաքից քիչ հեռու, որի մօտը համեստ,
անշուք է. դուր զարկում էր դրան դանդաղ, ձեռ
բացում է մի փոքրիկ տղայ համեստ շօրերով,
կամ մի փոքրիկ օրվորդ: Տան ներսը համապա-

րուր բաժանմունքների մանրամասն նկարագրու-
թիւնը տալ իր ընթերցողներին, որոնց գոյց
մեծ մասը անկարող են այլ և այլ առիթներով
անձամբ այցելել այսպիսի մի օգտակար և կըր-
թիչ հանդէս և մօտից ծանօթանալ իրանց մաս-
նագիտութիւններին վերաբերեալ կատարելագոր-
ծութիւններին, ինչպէս և ուրիշ շատ հրահանգիչ հո-
րութիւններին հետ. բայց նկատելով որ դուռ մաս-
նագիտական տեղեկութիւնները կարող են միայն
յարդել ընթերցողներին մի մասին օգտակար լինել,
մինչդեռ միւս մասը կարող է բոլորովին դուրս
լինել հարկաւոր հետաքրքրութիւնից, մենք ստիպ-
ված ենք նկարագրել ամբողջ աշխարհահանդէսն
այնպէս, ինչպէս կարող էր դա առաջին անգամ
երևալ «Մշակի» որ և է ընթերցողին:

Աշխարհահանդէսի շինութիւնը հեշտութեամբ
տարբերվում է քաղաքի բոլոր շինութիւններից
իր արտաքին գեղեցկութեամբ, ինչպէս և իր մե-
ծութեամբ: Գլխաւոր շինութիւնն ունի լատինա-
կան լապի ձև, որի կենտրոնից բարձրանում է
կիսագնդաձև մի անհայտն գմբէթ մօտ եօթնամա-
սուն սաժէն բարձրութեամբ, որի կաղնուածքն
այնչպիսի չընդ և բարակ է, որ իսկույն քաղցր տը-
պաւորութիւն է դրոճում այցելուի վրա: Այս
լապի հարաւային և հիւսիսային բազուկները
կաղնում են անցքեր, որոնք տանում են դիւստոր
շինութիւնից դէպի շրջապատող ընդարձակ պար-
տէզը, մինչդեռ դէպի արևելք և արևմուտք ձրց

տախտակներով և արտադրվող, ամեն կողմ անշուշտ թիվներ, կարգ, կանոն և մարտնչություն, բայց վերջին աստիճանի համապատասխան, մինչև անգամ աղքատությունը Այդ գերմանական մի բարեգործական հիմնադրություն է, որը հայտնի է:

Այդ գերմանական հասարակական հիմնադրությունը հիմնված է Նաթանիել կեն վերադարձվել հեռավորության վրա: Սրա իսկ կարծառուտ նկարագրությունը մեջտեղ ընկելով, մինչև կամենում ենք ապացուցանել բարեգործի հայ կանանց, թե որքան հեշտ կը լինե՞ր նրանց համար մի սոցիալական հիմնադրություն հեռավորությունը, մասնաւորապէս աչքի առաջ ունեցաւ և այն, որ գերմանական այդ գեղեցիկ հիմնադրությունը կարող էր օրինակ լինել նրանց համար:

Այն միջոցները, որոնցով պահպանում է իր գոյությունը յիշեալ գերմանական հոգեբանական անտէրուհի մանուկների ապաստարանը, ստացվում են թէ մշտական և թէ պատահական բարեգործություններից, և այդ միջոցները պէտք է ասել որ շատ էլ առատ չեն լինում. օրինակ 86 թվին ամբողջ տարվայ մուտքը եղել է 3,239 ռուբլի. (անցեալ տարեց մնացած է եղել 400 ռուբլի), մի և նոյն ժամանակ ունեցել է 30 դեռահաս երեխաներ, և այդ մշտական և միջին թիվն է: Այստեղ երեխան սովորում է կարգաւ, գրել, (ուսերէն և գերմաներէն) թարգմանութեան սկզբունքը և կրօն. բացի այդ կոչիկ կարել, հաց թխել, ճերմակեղէն լուսնալ, կար կարել, զամբել գործել, յատակի դորդ պատրաստել, այգիի և պարտէզի նայել, և այդ ամենը այդ չնչին միջոցներով: Այդ կարող է անել միայն գերմանական օրինակելի խնայողութիւնը, նրա կարգաւորութիւնը, համբերութիւնը և ընդունակութիւնը: Այստեղ երեխաները թէն սովորում են ամեն բան տարապէս, բայց և այնպէս նրանք են կարում իրանց չորերը, գործում գուպաները, իրանք են թխում իրանց հացը, և իրանց պահած պարտէզի ու այգիի արտադրութիւնից ոչ թէ միայն իրանք են օգտւում, այլ և վաճառել էլ են դնում: Հիմնարկութիւնը կառավարում է ամենայն տարի ընտրվող հոգաբարձութիւնը: Իսկ ամբողջ հիմնարկութիւնը ունի մի ուսուցիչ, (կաւեյանները մինչև և վարպետ) որ նրանց լեզուով կոչվում է «Hausvater» (տնայայ), որը և ամեն բան սովորեցնում է: Եթէ նրան հարցնեք որտեղից գիտէ նա այդ ամենը, նա ձեռք կը պատահանէ՝ «Կալէք է իմանալ»: Այդպիսով երեխայք երբ այնտեղից դուրս են գալիս, արդէն լինում են աւելի քան կիսով չափ կեանքի համար պատրաստ:

Ահա այդպիսի մի հիմնարկութիւն կարող էին ձեռնարկել մեր կանայքը: Այդպիսի մի հիմնարկութեան անհրաժեշտութիւնը դիտարկում է մասնաւորապէս այն ժամանակ, երբ տեսնում ենք փողոցներում և շատ գաղտնի ծակ ու ծուկերում՝ անտէրուհի, որը հայ երեխաներին, երկու սեռից էլ: Եթէ չենք կարող ունենալ մեծ միջոցներ, (որ անհաւանական է), գոնէ կարելի կը լինի գտնել

20 երեխաների համար մի ապաստարանի հիմնարկութեան միջոցներ: Եւ այդ շատ հեշտ և պարզ կերպով. հարկաւոր է միայն, որ մէկը ձեռնարկէր, միւս պատուելի հայ տիկինները և փափկասուն օրերը կը հետեւին նրա օրինակին: Միթէ այնքան յեղինակաւ ազդ ենք, որ գոնէ մէկ հայ կին էլ չի գտնվի ամբողջ Բագրուի հայ կանանց մէջ այդ տեսակ օգտակար, նայն իսկ անհրաժեշտ գործ դրուել բերելու:

Ար.

ՆԱԿԱՐԱԿ ԿԱԿՈՅ

Սեպտեմբերի 10-ին

Կովկասի մէջ դուրս է չը գտնվի մի անկիւն, որի բնութիւնը այնքան հարուստ լինէր բնական բերքով և արտադրութեան պայմաններն էլ այնքան նպաստելի, որքան Կասի վիճակը. —բայց դուրս հետ միասին դուրս է չը գտնվի և մի անկիւն, որի ժողովուրդը, չը նայած աշող պայմաններին, լինէր այնքան չքուն, ինչպէս այստեղի ժողովուրդը: Հողը առատ, բարեբեր և բազմաբեր է, ողջ հովաբարկառն, չը կապ լեռները անտառապատ, ջուրը առատ, արտահանութեան համար տեղի դիքը յարմար, —էլ ի՞նչ է պակաս մի ժողովուրդ բարեկեցութեան համար: Բայց ոչ, բանը դրանում է չէ՝—հայեցէք տեղական ժողովուրդին և դարձեցէք, թէ ինչպէս հարուստ, դժբախտ մօր բնութեան ծոցում աղքատ ու չքաւոր է նորա որդին՝ ժողովուրդը: Եթէ ու համաձայնեցէք այս երկու հակասութիւնները: Հարկանցի կերպով մի հայեցեք ձգե՛ք այն պայմաններին վրա, որոնք կարող են առաջացնել այդ տեսակ իրար հակասող դրութիւններ:

Արտադրական արդիւնաբերութիւնը, որով ըզբաղված է Կովկասի աղքատեանութեան մեծ մասը, եթէ չստանք բոլորը, չա՜նաւտ և արդիւնաւոր լինելու համար կալված է զլիսաւորապէս երկու նշանաւոր ֆակտորներից, —բնութեան ծոցում թաղված արտադրական արդիւններից և այն աշխատութիւնից և ոյժից, որոնք գործ են դրելու միջոցով աղբիւրներից օգտվելու համար: Այդ երկուսն էլ փոխաբարձաբար կապված են իրար հետ: Ինչպէս բնութիւնը առանց մարդկային ջանքի կը մնայ մեռած, այնպէս էլ մարդկային ջանքը կը մնայ անհետանալու առանց բնութեան արտադրելի արդիւնների: Զարմանալի չէ, եթէ մի տեղ, ուր խորթ մօր նման անշուք, անբարեբեր է բնութիւնը, չը նայած իր դործ դրած բոլոր ջանքին՝ աղքատ է ժողովուրդը: Կարա հետ միասին ցաւալի և անբնական է, երբ աղքատ է մի ժողովուրդ, որին բնութիւնը չնորհել է արդիւնաւորութեան առատ արդիւններ և արտադրութեան նպաստելի պայմաններ: Այդ դեպքում աղքատութիւնը կախում ունի նոյն իսկ ժողովուրդից, նորա գործ դրած աշխատութեան ոյժից և այն հանգամանքներից, որոնց մէջ դրված է այդ աշխատութիւնը: Եթէ մի ժողովուրդը ծոյլ է և ան-

փայլ դեպի իր ձեռքում գտնված հարստութեան արդիւնները, կամ եթէ աշխատատեղ է, գործ է դնում բաւականաչափ ոյժ բնութեան տուած անսպասելի արդիւնք օգտվելու համար, բայց մի և նոյն ժամանակ անհոգ է դեպի իր ստացած արդիւնքը և չէ պաշտպանում նրան զանազան վաշխառութիւնների, հարստահարիչների ու այլ պարավորների թալանաւորներից, —այն ժամանակ բարեկեցութեան համար նա անկարող է:

Կասի վիճակի աղքատեանութիւնը բաղկացած է երկու մասից և սխալաբանաւոր «ուղղալ» կոչված թուրքերից: Եթէ աղիտութեան և արտադրութեան նախաջրեղեղեան միջոցների վրա աւելացնենք երկրորդի գոյած ծուրութիւնը ու անհոգութիւնը և եթէ աչքի առաջ առնենք պարտք վերցնելու դիպացիկների տնտեսութիւնը սպանող այն ցաւալի տոկոսութիւնը, որը տասնեակ տարիներ ընթացքում գործածութեան մէջ լինելուց յետոյ, բնական երկողքների կարգն է ընկել՝ աշտեղ, այն ժամանակ հասկանալի կը լինի, թէ ինչո՞ւ մի ժողովուրդ, որի բարեկեցութեան համար ոչինչ չէ պակաս, գտնվում է տնտեսական անմխիթար դրութեան մէջ: Նորա բերրի դաշտերը տալիս են առատութեամբ ցորեն, դարի, կորեկ, բրինձ և այլն, անտառները, բացի ձրի վառելիքայտ և շինութեան համար փայտ ժառանգարաբեր, տալիս են և «սարաղան» կոչված թուրք, որի տերերի պուրը 50—100 կօպէկ է ծախվում: Նոյա պղնձները արտադրում են կողին (ֆիդլ), շագանակ (շաբալու), ընկույղ և այլ պտուղներ և բացի այդ միջոց են տալիս դիւնդործութեամբ, շերամապահութեամբ և մեղրապահութեամբ պարապել, ընդարձակ արտադրութիւնը անսասնապահութեան համար մեծ յարմարութիւններ են ներկայացնում, —բայց նա անհոգ է դեպի հարստութեան այդ անգին արդիւնները, նա սովոր է բաւականաւոր քչով: Մի կողմից ծուրութիւնը և անհոգութիւնը, իսկ միւս կողմից անսպասելի պարտքերը պատճառ են դնում նրա տնտեսական անմխիթար, ծանր դրութեան: Չը կայ մի ընտանիք, որը կրում չը լինի իր վրա 100-ից մինչև 1,000 ռուբլի պարտքի ծանրութիւնը, որը օրըստօրէ աւելի անտանելի է դառնում, բայցայնով նորա տնտեսական վիճակը և նոյն իսկ անբարոյարկանայնելով նորան Պարտապան դիպացիկ պարտքի ծանրութիւնից ապաստվելու համար այժմ յաճախ դիմում է մի միջոցի, նա ուրանում է իր պարտքը: Որովհետեւ պարտամուհիակի տակ անպարտկոթութեան պատճառով ինքը չէ ստորագրում, ուստի դատարանի առաջ նորա խօսքը անցնում է. «Կեմ տեսիլ», չը զիտեմը՝ նորան աղաւթում է իր պարտքերը հատուցանելուց: Իսկ վաճառականներ քիչ առ քիչ դրելով մեծ է նոյն իսկ իրան ճշմարտապէս անտանելի փողերից, ուր մնաց թէ տոկոսներից ու անբարեբեր փողերից: Ժողովուրդը, եթէ դատաւ մի միջոց հեշտութեամբ իր ծանր բեռը դէն զցելու, ալ ևս այդ միջոցից ձեռք չի քաշի, դուրս հետե-

ւանքը այն կը լինի, որ մեր վաճառականները շուտով կը գրկվեն իրանց ունեցած-չունեցածից, որովհետեւ այստեղի վաճառականի հարստութիւնը կազմում են այդ տաղաւորները (նիսիաները): «Ինչ կը ցանես, այն կը հնձես», կամ «արածդ առաջ կը ցայ» ասում է ժողովրդական իմաստութիւնը: Գոնէ այժմ հասկանալին մեր վաճառականները այդ ասացվածների խորին իմաստը:

Ք. Թ.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ՂԱՐԱՍՈՒՐ-ԲԱԶԱՐՈՒՅ Կ. Կարա-Մուրզա հեռագիր է ուղարկել մեզ, խնդրելով որ յայտարարենք «Մշակի» էջերում, թէ իր պարագմունքները Բագրուի մէջ սկսվելու են հոկտեմբերի 1-ից:

Յայտնի է արդէն, որ հռչակաւոր նկարիչ Այվազովսկու յօրեղանի առիթով հրամայված է կտրել տալ ոսկեայ մեղալինի, յօրեղանի պատկերով: Այժմ «Русский Курьер» րապիւրը լսել է որ դիտաւորութիւն կայ բացի ոսկեայ մեղալինից կտրել տալ և թղթութիւն խնդրել կտաւարութիւնից ծախել այդ մեղալինի, որպէս զի գոյացած գումարը գործ դրվի մի օր և է բարի նպատակի, Այվազովսկու անունով:

Օտարները սկսում են աւելի և աւելի այցելել մեր երկրը: Ոչ մի տարի, մեր կարծիքով, այդքան շատ օտարներ չը կային թիֆլիսում, որքան այս աշնան:

Մենք լսում ենք որ Ֆրանսիացի Ժիւլ Մուրիէ, որ դիտաւորութիւն ունի հրատարակել թիֆլիսում ուսուց և Ֆրանսիական լեզուով մի տնտեսական-արդիւնաբերական ամսագիր, այս օրերս հասել է թիֆլիս և շուտով ձեռնամուխ է լինելու իր ամսագրի հրատարակման:

Այս վերջին չարաֆներում սաստիկ բանակու էր ծագել Պետերբուրգի երկու ուսու լրագրիւնների մէջ հրէական հարցի առիթով Պ. Նոսովիչի «НОВОСТИ» լրագրի պաշտպանում էր հրէաներին, իսկ պ. Սուլօրիչի «Новое Время» լրագրի անխնայ յարձակում էր հրէաների դէմ: Այժմ երբ բանակուր վերջացաւ, մենք գուցէ կարծառու կերպով կը յայտնենք մեր կարծիքը այդ բանակուի մասին:

Այժմ շատերը մեղ դիմում են խնդրելով որ ծախենք «Մշակի» անցեալ բոլոր տարիների համարները: Մենք թէն ունենք խաղաղատանը «Մշակի» անցեալ տարիների համարները, բայց նրանցից դուրս մի տառ, տասն և հինգ հատ պակաս է: Այնու ամենայնիւ մի քանի տարիների «Մշակի» ժողովածուները լրակատար են: Որովհետեւ «Մշակը» նախ 5 ռուբլի արժէր, յետոյ

վում է խաչի ոտըը հարկւր յիսուն սաթէն երկարութեամբ: Միջին կամարի երկու կողմից բարձրանում են գեղեցիկ աշտարակներ, իրանց թևերի տակ ունենալով երկու քառանկիւնաձև պափկեցններ, մինչ երկու զլխաւոր անցքերի ծայրերն էլ կրկին պսակված են աշտարակներով: Փոքր հեռավորութիւնից նայելով մեծ դմբէթը, պափկեցններն և աշտարակները ներկայացնում են մի հաղուազիւտ տեսարան իրանց ոսկեղօծ կատարներով և արտիստական նկարներով: Իսկ ամբողջ աշտարակների տեսքը իրենցից զեղեցիկութեան է ստանում բուսականական պարտիզի դալարադարձ թփերով, ծառերով և անթիւ ծաղիկներով: Դիտութեան նշանաւոր մասերը ծածկված են ապակիով, այնպէս որ առատ լուսի վաշխուղ աղբեցութիւնն իսկոյն դարձնում է այցելուի աչքին, տալով հանդիսի ներքին մասերին շատ ուրախ կերպարանք: Այնչափ հրաշալի է շինութեան կառուարութիւնն և ճարտարապետութիւնը, որ դուրս է առաջին անգամից դըրաւել աշխարհահանդիսի մեծութեամբ և դրա բռնած ընդարձակ տարածութեամբ: Բացի մայր շինութիւնից, հարաւային կողմում կան նաև երկու մասնաւոր բաժանմունք, ուր պահված են մեքենաներ միայն:

Հանդիսի բռնած հրապարակը բուսականական պարտիզի հետ միասին աւելի է քան 12,5 դեկաւտին, շինութեան ծածկած հրապարակը միայն լինելով 5,5 դեկաւտին, այսինքն աւելի ընդար-

ձակ քան թէ լիւրեպուլի աշխարհահանդէսը, որը մենք նկարագրել էինք «Մշակի» անցեալ տարվայ համարներից մէկում, և մեծ քան թէ Լոնդոնի և Եդինբուրգի աշխարհահանդէսները: Միմիայն մեքենաներին նուրբված տեղի տալու ծուրութեան է 176,380 քառ. ֆուտ, այսինքն երկու անգամ աւելի քան այդ երեք հանդէսներինը առած միասին:

Աշխարհահանդէսն ունի մի մեծաշուք դուռ, որը կոչվում է «աղբալական մուտք», այս դռնից մի ընդարձակ սրահ տարածվում է 45 տաճէն երկարութեամբ և մօտ 9 տաճէն լայնութեամբ, միանալով մայր շինութեան հետ և ունի ձմերուկի պարտիզի բոլոր կերպարանքը: Այս սրահը կապված է ճիւղաղաղ ճաշարանների հետ և ունի երկու կողմերում երկու սեռի համար պատրաստված բուսական առանձին սրահներ: Սրան կից է մի մեծ գալերէյ, ուր գտնվում է աշխարհահանդիսի զլխաւոր դասնակալը, այս սենեակի ետև թողված է տեղ լայնօղակայ սրահարանների սրահն: Ահաւասիկ այս տեսարանն է, որ պէտք իսկոյն բացի օտար երկրի լրագրիւնների ներկայացուցիչների աչքին, քանի որ այս գեղեցիկ մասի վրա են նայում թղթակցիներին համար մասնաւորապէս պատրաստված սենեակները:

Ընթերցողին խնդրում ենք վստահութեամբ և համբերութեամբ մեզ նուիրել իր երկակայութիւնը և հետեւել մեզ մինչ միայն կը դադրենք ըզ-

մայլել այս գոտող շինութեան զլխաւոր մասերով, առանց հայեացք նետելու դոյա բազմազան պարունակութեանց վրա: Մենք մասնը ներս արքայական դռնով և անցնելով ձմերուկի պարտիզի կերպարանք ունեցող գալերէյը: Այժմ անհետում ենք դեպի ձախ: Այստեղ բաղկում է երաժշտական մի մեծ սրահ, 22 սաթէն երկարութեամբ և 15 տաճէն լայնութեամբ, մի մեծ օրկեստրայով և երկուցական մի մեծ օրգանով: Սրա հարաւային կողմը բռնած է զեղարուեստական բաժանմունքը, 13 գալերէյներով, իւրաքանչիւրը 12-ից մինչ 15 տաճէն երկարութեամբ: Այս գալերէյներն ունեն անպահովեալ դռներ, որոնք նոր հնարած են և կարող են հարկաւոր դեպքում փակվել և աղասել հարուստ զեղարուեստական մասը պատահական հրդեհից: Սրա արևմտեան կողմում դրված է մի մեծ ժամացոյց, որը ցոյց է տալիս թագուհու կառավարութեան տակ գտնվող բոլոր երկրների ճիշդ ժամը: Դառնալով մայր շինութեան հարաւային կողմը, տեսնվում է քիմիայի հետ կապ ունեցող արհեստագործութեանց բաժինը: հարկւր սաթէն երկարութեամբ և 9 տաճէն լայնութեամբ, որի մէջ մտնում է նաև ֆոտօգրաֆիական արհեստի ճիւղը: Այս մասից բարձրանում են թաշաճածկ ատրիճաններ, որոնք տառնում են դեպի մի մեծ կամուրջ, որը միացնում է մեքենաների բաժանմունքը կինոթիւնական մասի հետ: Այս կամուրջն էլ ծածկված է ապակիով և ունի հրդեհից աղտովելու մեծ նախազգուշու-

թիւններ: Անցնելը կամուրջը և մտնելը մեքենաների պահեստը: Հայկական եկեղեցու վերնատան նմանող սինագոգը անցքեր տանում են օղաչու այցելուների խուռն բաղնիքները դեպի այս բաժանմունքի ամեն կողմերը: Այս բարձրութիւնից դիտում են առհասարակ կանայք և օրիորդներ, որոնց բաղնիքի պատճառները չէ ներսում իջնել ցած և մօտից տեսնել չարժող մեքենաների հետաքրքիր գործողութիւնները: Հարկու արևելեան անհամեստ աչքը պատահութիւն ունի այստեղ վար նայելու փոխարէն վեր նայել, բայց մեր առաքելին ընթիկցողից խնդրում ենք մեզ հետ վար նայել: Մանչևտրի երկաթուղիներից մի դիմ բերված է մինչ աշխարհահանդիսի այս մասը և երկաթուղու տնօրէնութիւնը մեծ պատրաստութիւններ ունի այցելուների հանգիստ և անվտանգ փոխադրութեան համար: Շարժող մեքենաների տան ետև շինված է մի մեծ կաթնայանոց, որը պարունակում է Գալուէյի ամենամեծ կաթնաներից տառը հատ: Սրա մասակարարում են շարժող դուրս թիւն մեքենաներին, լիւպէս և աշխարհահանդիսի համար էլեքտրական լույս պատրաստող դիմաճանկներ: Կաթնայանոցին կից շինված է հարմարական կորագծի ձև ունեցող մի երկար սահաւան, որը մեծ ժողովրդականութիւն է վատաւրած հանդիսի երկտասարդ այցելուներից: Եւ երբեմն դուրսնալի խաղեր են դրվում տահարանից քիչ հեռու գտնվող մի լայն հրապարակի վրա, ուր միշտ պատրաստ կանգնած են քառասուն

